ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 237 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 429-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի և ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» N 429-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«XIV. ԱՂԵՂՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

60. Աղեղները ենթակա են քրեագիտական պահանջներին համապատասխանության փորձարկման: 27 կգ/ուժ-ից բարձր ձգման ուժ ունեցող ունիվերսալ աղեղները ենթակա են համապատասխանության գնահատման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 605-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

61. Աղեղները լինում են հինգ տեսակի՝

1) ունիվերսալ սպորտային-որսորդական.

2) սպորտային.

3) հանգստի և ժամանցի.

4) ինքնաշեն.

5) գեղարարական և հուշանվերային՝ արտաքինից նետողական զենքերին նմանվող:

62. Աղեղները, ըստ իրենց նախատեսվածության, լինում են՝

1) ***ունիվերսալ սպորտային-որսորդական***՝ նետողական զենքեր են, որոնք նախատեսված են որսի և սպորտային (բաց տարածություններում և փակ շինություններում թիրախը խոցելու համար) վարժական պարապմունքների և սպորտային միջոցառումների ընթացքում օգտագործելու համար.

2) ***սպորտային***՝նախատեսված են սպորտային (բաց տարածություններում և փակ շինություններում թիրախը խոցելու համար) վարժական պարապմունքների և սպորտային միջոցառումների ընթացքում օգտագործելու համար և նետողական զենքերի շարքին չեն դասվում: Սպորտային աղեղները պատրաստվում են անվտանգ ցանկացած նյութից, ունեն ազատ ձև և չափ, ինչը հեշտացնում է դրանց օգտագործումը 5-125 մ տարածության վրա կրակելու ընթացքում՝ կանանց և տղամարդկանց համար մինչև 165 մ՝ կախված կրակելու ձևից.

3) ***հանգստի և ժամանցի***՝նախատեսված են հանգստի ժամանակ ինքնուրույն կազմակերպվող մշակութային-հանրային կամ առևտրային միջոցառումների ընթացքում թիրախները խոցելու, ինչպես նաև մարզիկների կողմից նախնական սպորտային պատրաստվածություն անցնելու ընթացքում օգտագործելու համար, իրենցից ներկայացնում են կենցաղային-տնտեսական նշանակության արտադրա-տեսակներ և նետողական զենքերի շարքին չեն դասվում: Ունեն 5 կգ-ից մինչև 14 կգ ձգման ուժ, և նետը թափանցում է սոճու չոր տախտակի մեջ 8 մմ-ից ոչ պակաս.

4) ***ինքնաշեն***՝ ոչ գործարանային եղանակով պատրաստված աղեղներ են: Դրանց պատկանելիությունը նետողական զենքերին որոշվում է քրեագիտական հետազոտությամբ.

5) **գեղարարական և հուշանվերային՝** ունեն գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակություն և նետողական զենքերի շարքին չեն դասվում:

63. Ունիվերսալ սպորտային-որսորդական և սպորտային աղեղների վրա պետք է լինի մակնշում՝ առավելագույն նախագծային լարվածության ուժի և հեռավորության նորմերով:

64. Սպորտային աղեղների նետերը պատրաստվում են անվտանգ ցանկացած նյութից՝ ցանկացած երկարությամբ, հանդիսանում են սպորտային գույք, նախատեսված են սպորտային մարզումների և մրցումների ժամանակ օգտագործելու համար:

65. Նետի փետուրների չափը և որակը չի սահմանափակվում:

66. Աղեղների նետերի ծայրակալները չեն կարող իրենց մեջ պարունակել թունավոր զրահահար-այրող, բռնկվող կամ հետագծող նշանակության հատկություններ:

67. Ունիվերսալ սպորտային-որսորդական աղեղների նետերի ծայրակալները կարող են ունենալ սուր եզրեր և թիրախը խոցելու ընթացքում տրամագիծը փոխելու հատկություն:

68. Սպորտային, դեկորատիվ և հուշանվերային, ինչպես նաև հանգստի և ժամանցի համար նախատեսված աղեղների ծայրակալները չպետք է ունենան կողեր և սուր (կտրող) եզրեր:

69. Աղեղներին և դրանց նետերին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն «ԳՕՍՏ Ռ 51715-2001» (փոփոխություններով), «ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 52115-2023» (փոփոխություններով) և «ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 51549-2022» (փոփոխություններով) պահանջներին։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ